



Ք. ՅԱՎՈՐՈՎ

Հ Ա Յ Ե Ր

Հալածվածներ թշվառ, չնչին բեկորներ,
Ժողովուրդի մ'արի, այսօր նահատակ,
Ահաբեկ ու գերի մոր մը վավականեր,
Ջոհեր՝ անհունորեն վսեմ քաջության,
Հայրենիքեն հեռու օտար երկնքի տակ,
Հյուծած, գունատ, հավաքված տուն մը խարխուլ,
Կըմպեն, ու իրենց կարյունի սիրտը՝ վերքեն,
Կերգեն, ինչպես երգն՝ արցունքին ընդմեջեն:

Անոնք կերգեն, կուպեն մոռնալ՝ հարբելով՝
Հին տառապանքն ու ցավերը այսօրվա,
Հիշատակը խեղդել հրաշունչ գինիով,
Քնացնել հոգին ջախճած կրծքին տակ,
Կուպեն՝ հաված գանգերուն մեջ անհետի
Տառապագին պատկերն անոր մայրական,
Կուպեն անոր օգնության կանչը վերջի
Ա՛լ չլսել, մոռացության մեջ գինով:

Հոտ մը՝ ինչպես գազանն մը հալածված,
Ահա անոնք տարտղնված են ամեն տեղ,
Ու կատաղի բռնակալը արնախանձ՝
Անոնց գլխուն կը պահե իր սուրը մերկ,
Խեղճ հայրենիքն արյունի մեջ են լքած,
Բոցերու մեջ լքած են տունն հայրենի:
Օտարության մեջ անոնք խորթ մնացած,
Միակ ճամբան, գինետանն է՝ կը բացվի:

Անոնք կերգեն...: Վայրենի է երգն իրենց,
Ու վերքերը անոնց սիրտը կը կրծեն:

Ու կը խեղդե վանոնք քենը բոցակեպ,
Ու արցունքը կիյնա դալուկ այտերեն...
Ճնշված սրտերն դառն մաղձով են լեցուն,
Ու կրակը կայրե միտքը գանգին մեջ,
Ու կը փայլի շանթը արնոտ աչքերուն,
Ու կը խոսի հոգիներուն մեջ վրեժ:

Իսկ փոթորիկը ծմռան կը ծայնակցի
Կարծես, կոռնա ահեղորեն ցայգուն գիրկ.
Կը տարածե ապստամբ երգն աշխարհի
Վրա՝ ինչպես ահեղ որոտ ու մորիկ:
Ու երկինքը կը մռայլի ավելի,
Ու ավելի կը խոժոռի ցուրտ գիշեր,
Կերգե խումբը, ուժգնությամբ ավելի
Կըլլա ահեղ փոթորիկն ալ ընկեր...:

Կը խմեն ու կերգեն... անոնք՝ բեկորներ
Ժողովուրդի մ'արի, այսօր նահատակ,
Ահաբեկ ու գերի մոր մը վավականեր,
Ջոհեր՝ անհունորեն վսեմ քաջության,
Հայրենիքեն հեռու, բոկոտն ու մերկ,
Օտար երկիր՝ հավաքված տուն մը խարխուլ,
Կըմպեն—գինվով տառապանքը կը մոռնան,
Կերգեն. ինչպես երգն՝ արցունքին ընդմեջեն...:

Թարգմ. քուլդարերենե՝ Ա. ՍԵՎԱՆ
(Թեոդիկ, «Ամենուն տարեցույցը», 1926, էջ 255):

